

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏՈՒՄ

ՄԵՐԻ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Վահան Տերյանի ծառայությունը արևելահայ բանաստեղծական լեզվի զարգացման, մշակման ու համալրման գործում բացառիկ է: Բանաստեղծը նոր գրականության լեզվի բարեփոխիչը եղավ, սկզբունքորեն նոր ձևով լուծեց նաև չափածո խոսքին անհրաժեշտ գրական բառապաշարի հարցը: Տերյանը չափածոյի բառապաշարի հարստացման մի յուրօրինակ ուղի ընտրեց, որը նրան տարավ դեպի անհատական բառաստեղծում: Այս իրողությունը, ինչպես նաև Տերյանի անկրկնելի արվեստը արդեն կարևորում են նրա խոսքարվեստի գլխավոր առանձնահատկություններից մեկի՝ հեղինակային նորակազմությունների քննությունը տերյանական լեզվի նորարարության, բանաստեղծի կերտած գեղարվեստական պատկերի ավելի հանգամանալի ուսումնասիրության առումով:

Ինչպես հայտնի է, անհատական նորաբանությունները (հեղինակային նորակազմություններ) ոճական իրակություն են: Ի տարբերություն լեզվական նորաբանությունների՝ հեղինակային նորակազմությունները ոչ թե նոր երևան եկած առարկաների, երևույթների անվանումներ են, այլ հասկացությունը, երևույթը նոր ձևով արտահայտող լեզվամիջոցներ: Նորակազմ բառերը բանաստեղծին հնարավորություն են տալիս խուսափել անընդհատ շրջանառվող բառերի և կապակցությունների հաճախակի գործածություններից՝ նպաստելով նաև խոսքի հուզաարտահայտչական հնարավորությունների ընդլայնմանը: Նշենք նաև, որ դժվար է միանշանակ ճշգրտությամբ որոշել ինչպես Վ. Տերյանի, այնպես էլ որևէ այլ գրողի հեղինակային նորակազմությունները: Նոր բառերի հեղինակային պատկանելության մասին կարող ենք խոսել միայն որոշ վերապահումով: Այս մասին Ս. Էլոյանը գրում է. «Հեղինակային նորաբանությունների ստույգ որոշման խնդիրը հղի է թյուրիմացություններով ու սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները»¹: Ուստի Տերյանի չափածոյից քաղված նորաբանությունների վերաբերյալ մեր բոլոր դիտարկումները սահմանափակվում են այն բառազանձի շրջանակներով, որ ընդգրկված է արդի հայերենի բացատրական բառարաններում: Նման մոտեցմամբ հեղինակային նորաբանություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք՝

ա. չկան Ստ. Մալխասյանցի (ՋՋԲ), Էդ. Աղայանի (ԱՅԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում (ԺՋԲԲ)², ինչպես օրինակ՝ **դժնափայլ** (II, 30), **նրբագին** (II, 41), **հուրվարդ** (I, 201), **հուլերգ** (II, 20)³:

¹ Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989, էջ 224:

² Փակագծերում նշված են բառարանների վերնագրերի համառոտագրումները:

³ Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. I, հ. II, Եր., 1960, 1961: (Այսուհետ շարադրանքում բանաստեղծի ժողովածուների անվանումների փոխարեն կնշվեն միայն հատորն ու էջը):

բ. Չկան ՉԲԲ-ում, իսկ ԺՅԲԲ-ում և ԱՅԲԲ-ում տրված են միայն Տերյանի չափածոյից քաղված օրինակներով կամ այն իմաստի բացատրությամբ, որով Տերյանը գործածել է իր բանաստեղծություններում: Որոշ նորաբանություններ բառարաններում տրված են *նրբ.* (նորաբանություն), *հզվդ.* (հազվադեպ) կամ *բնստ.* (բանաստեղծական) նշումներով: Այդպիսիք են հետևյալ նորաբանությունները՝ **աղմկահեր** (I, 22), **աղմկահյուս** (I, 196), **առագաստաբաց** (II, 176), **աստեղաշող** (I, 254), **արծաթաճոճ** (I, 86), **լեռնադուստր** (I, 238), **հեռածավալ** (I, 16, 178), **հեռանիստ** (I, 83, 191), **հրահրուն** (I, 85, 211, 235), **հրավարդ** (I, 210), **հրդեհավառ** (I, 71), **նրբակապույտ** (I, 263), **նրբահյուս** (I, 16), **ոսկելուսիկ** (II, 37), **սառնաթև** (I, 250), **սուրսայր** (I, 236), **տխրադալուկ** (I, 55), **տխրաբոց** (I, 180), **տնավանդ** (I, 267), **քնքշաբույր** (I, 88), **քնքշաշրշուն** (II, 15)⁴, **օրրերգ** (I, 100) և այլն:

գ. Չկան ՉԲԲ-ում, իսկ ԱՅԲԲ-ում և ԺՅԲԲ-ում տրված են Տերյանի չափածոյից քաղված օրինակներով, ինչպես՝ **ամփոփիկ** (I, 84), **անզվարթ** (II, 61), **անօրոր** (II, 62), **արյունաբորբ** (II, 124), **արնանման** (I, 204)⁵, **արնառուն** (II, 157), **սրնգանուշ** (II, 85) և այլն:

դ. Նույնությամբ կան միայն եդ. Աղայանի բառարանում և տրված են այն իմաստային նրբերանգի բացատրությամբ, որով Տերյանը գործածել է իր բանաստեղծություններում: Որոշ բառեր ունեն *հզվդ.*, *նր.* կամ *բնստ.* նշումները: Ահա օրինակներ՝ **աստղացանց** (I, 86), **զվարթակարկաչ** (I, 59), **միգասքող** (II, 15), **ստվերապաճույճ** (I, 59), **քնքուշաբույր** (I, 86), **ծյունապայծառ** (I, 264), **ծյունաքնքուշ** (II, 85), **մթնշաղվել** (I, 52) և այլն:

Ժամանակակից գրական հայերենում հեղինակային նորակազմությունները ստեղծվում են լեզվում առկա բառերի ու արմատների օգտագործումով: Տերյանը վարպետորեն օգտվել է հայոց լեզվի բառակազմական հնարավորություններից՝ ստեղծելով բարդ և ածանցավոր շատ բառեր, որոնք համահունչ են բանաստեղծական բառապաշարին և տերյանական խոսքին: Բանաստեղծի ստեղծած նոր բառերը հիմնականում համապատասխանում են մեր լեզվի կենսունակ կաղապարներին և ունեն գեղարվեստական արժեք: Բանաստեղծական խոսքում ածական + գոյական, գոյական + ածական, մակբայ + բայահիմք, գոյական + բայահիմք, ածական + ածական կաղապարներով կերտված բարդությունները առավելապես մակդիրային կիրառություն ունեցող ածականներ են: Ահա օրինակներ:

Յեռածավալ (ածական) – հեռ+ա+ծավալ (մակբայ + բայահիմք)՝ «հեռվում ծավալված»⁶: «...Յեռածավալ անհայտներում պահվտած՝ Գալիք օրերն անհուն, անտես խավարում» (I, 16):

Յրդեհավառ (ածական) – հրդեհ + ա + վառ (գոյական + բայահիմք)՝ «հրդեհի նման վառվող, փխբ. կրակոտ, վառվռուն»: «...Քո աչքերի խորությունը հրդեհավառ, ուր վառված են մութ ցանկության ջահեր անխոս ... » (I, 71):

⁴ Այս բառը Տերյանի կենդանության օրոք հրատարակված նրա երկու գրքերում էլ հանդիպում է «քնքշաշրշուն» ձևով: Բանաստեղծի երկերի վերջին ժողովածուում «քնքշաշրշուն»-ը փոխարինվել է «քնքշաշրշուն»-ով: Կարծում ենք, որ պետք է հարգել բանաստեղծի նախընտրությունը, և ստեղծագործություններում պահպանել «քնքշաշրշուն» ձևը: Նույնը վերաբերում է նաև «ծյունաքնքուշ» բառին:

⁵ Նշված բառը ԺՅԲԲ-ում տրված է Տերյանի չափածոյից քաղված օրինակով, իսկ մյուս բառարաններում ամրագրված է «արյունանման» ձևով:

⁶ Բերված օրինակներում բառերի բացատրությունները տրված են ըստ եդ. Աղայանի բացատրական բառարանի:

Սրնգանուշ (ածական) – սրինգ + անուշ (գոյական + ածական)՝ «սրնգի ձայնի նման անուշ»։ «Կանչում են ինձ ձայներ, /Ձայներ սրնգանուշ ...» (II, 85)։

Տխրադալուկ (ածական) – տխուր + ա + դալուկ (ածական + ածական)՝ «տխրության դալուկով պատած՝ տխրություն արտահայտող»։ «Կրծքիս դիր դեմքը քո տխրադալուկ...» (I, 55)։

Քնքուշաբույր (ածական) – քնքուշ + ա + բույր (ածական + գոյական)՝ «քնքուշ բույր ունեցող»։ «Քնքուշաբույր ծաղիկների թերթերում, / Լույս դաշտերի նիրհող օվկիան...» (I, 86)։

Նորաբանությունների մակդիրային կիրառությունները խոսքի պատկերավորությանը նպաստելու առումով բացառիկ ոճական արժեք ունեն։ Հայտնի է, որ մակդիրը արտահայտում է առարկայի, երևույթի համար ոչ սովորական համարված հատկանիշը։ Եթե մակդիրի համար հատկանշականը առարկան, երևույթը նոր կողմով ներկայացնելն է, ապա նորաբանությունների մակդիրային գործածությունն աչքի է ընկնում հուզական, զգացական անհատական վերաբերմունքի արտահայտման կարողությամբ և ինքնատիպությամբ։ Դիտարկենք օրինակներ.

Երկնասլաց ու թեթև

Նրբակապույտ ծածկած մեզ... (I, 263)։

Դու այնտեղ էիր, այն աղմկահեր

Կյանքի մշուշում... (I, 22)։

Թերևս միայն Տերյանի նման բանաստեղծը կարող էր աշունը բնորոշել «տխուրաչյա» և «միզասքող», մեզն ու մշուշը՝ «նրբակապույտ» և «աղմկահեր», սիրած էակի փայլն ու հայացքը՝ «հրահրուն», իսկ նրա աչքերի խորությունը՝ «հրդեհավառ» մակդիրներով։

Տերյանի կերտած գոյական - նորաբանությունները բանաստեղծական խոսքում հանդիպում են գոյական + գոյական կադապարով։ Ահա օրինակներ՝

Այնպես վառ էր լեռնադաստեր դեմքը բաց,

Նայվածն այնպես հրեղեն ու անարվեստ... (I, 238)։

Դողում էր սիրտըս նորբաց,

Նորբաց մի հուրվարդի պես... (I, 201)։

Տերյանի չափածոյի բառակազմության մեջ պետք է առանձնացնել մի կարևոր յուրահատկություն, որ վերաբերում է ածանցմանը։ Ոճական մեծ լիցքով են հատկանշվում ածանցմամբ կազմված նորաբանությունները, ինչպես օրինակ՝ **ամփոփիկ** (I, 84), **նաիրական** (I, 203), **նաիրուհի** (I, 238), **նրբագին** (II, 41), **ոսկևուն** (II,107), **սրինգե** (I, 59), **վիրոտ** (II,62), **ցնորոտ** (I, 118), **ուրվականային** (I, 59), **ուրվականորեն** (I, 27), **փոթորկավետ** (I, 247), **փայլանք** (I, 35), **հեռաստան** (I, 26) և այլն։ Շատ գործածական են հատկապես **ան-** նախածանցով և **-անք, -ոտ, -ուն** վերջածանցներով կազմված նորաբանությունները։ Երբեմն գործուն են դառնում այնպիսի կադապարներ, որոնք արտադրողական չեն։ Բերենք ընդամենը մի քանի օրինակ։ Այսպես՝ Տերյանը մակբայ + գոյականակերտ ածանց կադապարով կազմել է **հեռաստան** բառը, մինչդեռ հայերենում **-(ա)ստան** ածանցը գոյականներ է կերտում գոյականական հիմքերից։ Կամ՝ **-որեն** ա-

ծանցը գործուն է ածական + մակբայակերտ ածանց կաղապարում, բայց **ուրվականորեն** բառը կազմվել է գոյական + մակբայական ածանց, **հոգ-նածորեն** բառը՝ հարակատար դերբայ + մակբայակերտ ածանց կաղապարներով:

Դրական կամ բացասական վերաբերմունքի ցայտուն դրսևորման բացառիկ դեր ունեն **ան-** նախածանցով կազմված նորաբանությունները: Ինչպես Ս. Էլոյանն է իրավացիորեն նշում, գեղարվեստական խոսքում **ան-** նախածանցի ակտիվացման հարցում առանձնապես մեծ է Տերյանի դերը⁷: **Տխուր** բառի փոխարեն Տերյանը գործածում է **անխինդ** (II, 13), **անարեգ** (II, 65), **անարև** (I, 67), **անզվարթ** (II, 61), **անուրախ** (I, 22), **անվարդ** (II, 17) բառերը՝ ստեղծելով նորակերտ խոսքային հոմանիշների յուրատեսակ շարք, **ճշմարիտ** բառի փոխարեն՝ **անուտ** բառը (I, 73), իսկ **լուսավոր** բառի իմաստն արտահայտում է **անաղոտ** (I, 61), **անստվեր** (I, 215), **անմութ** (II, 13) բառերով՝ դարձյալ կերտելով հոմանիշներ և նպաստելով խոսքի թարմությանն ու ինքնատիպությանը: Բացի այդ՝ նմանօրինակ նորաբանությունները, անցնելով լեզվին, հարստացնում են բառապաշարը բանաստեղծական հոմանիշներով և որպես համապատասխան հասկացությունների արտահայտման տարբերակային միջոցներ նախ և առաջ նպաստում են խոսքի բազմազանությանը և գեղարվեստականությանը:

«Մթնշաղի անուրջներ»-ից հետո Տերյանի լեզվում որպես **հայուհի, հայկական** բառերի համարժեքներ գործածվում են **Նաիրի** բառից կազմված **նաիրուհի, նաիրյան, նաիրական** նորակազմությունները: Այս մասին Ռ. Իշխանյանը գրում է. «Նախկինում գործածված շատ բառերի հետ «Նաիրին» էլ նոր բույր ու երանգ ստացավ խոսքի մեջ ու այդ շատ բառերի հետ որդեգրվեց հետագա հայ բանաստեղծության, նաև արձակի, նույնիսկ քննադատության, հրապարակախոսության ու բնական գիտությունների լեզուներում»⁸:

Նշենք, սակայն, որ «Նաիրի»-ն Տերյանից առաջ էլ հայտնի էր իբրև ասորեստանյան շրջանից եկող պատմաաշխարհագրական տեղանուն, և Տերյանը Հայաստանի պատմական անվանումներից **Նաիրին** գերադասել է ոչ թե, ինչպես Ռ. Իշխանյանն է նշում, «հայրենի երկրի նկատմամբ իր քնքշանքն ու ջերմությունը արտահայտելու համար»⁹, այլ հենց **Նաիրի** բառի արտահայտած իմաստի համար: Անհնար է, որ արևելագետ, պատմաբան և լեզվաբան Տերյանը ծանոթ չլիներ **Նաիրի** անվան ստուգաբանություններին, որոնցից շատերի համաձայն՝ **Նաիրի** բառը սերում է Հայկական լեռնաշխարհի հարևան սեմական լեզուներից և նշանակում է «կրակ, լույս»¹⁰: Պատահական չէ, որ «Երկիր Նաիրի» խորագրով Տերյանը մի ամբողջ բանաստեղծական շարք ստեղծեց, առանց որի «էպոսի թերի կլիներ ոչ միայն մեծ բանաստեղծի, այլև հայ հայրենասիրական պոեզիայի պատկերն առհասարակ»¹¹:

20-րդ դարի 40-50-ական թվականներից աննախադեպ կենսունակություն ստացած բայակազմությունը ավելի վաղ դրսևորումներ ունեցավ

⁷ Տե՛ս Ս. Էլոյան, Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Եր., 1973, էջ 97:

⁸ Ռ. Իշխանյան, Տերյանի լեզվական արվեստը, մաս Ա, Եր., 1972, էջ 79-80:

⁹ Նույն տեղում, էջ 80:

¹⁰ Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3-րդ, Եր., 1991, էջ 947:

¹¹ Էդ. Ջրբաշյան, Չորս գագաթ, Եր., 1982, էջ 262:

Տերյանի չափածոյում: Ինչպես նշում է պրոֆ. Լ. Եգեկյանը, այս դեպքում բայերը կազմվում են համաբանության (անալոգիա) սկզբունքով՝ միաժամանակ նպաստելով խոսքի սեղմությանը¹²: Ահա օրինակներ՝

բուրվառել՝ «Ծաղիկներն անուշ բույր են *բուրվառում*» (I, 32),

արշալուսել՝ «*Արշալուսեց* իմ երկիրն աղոտ...» (I, 140),

լուսավառել՝ «*Լուսավառված* է իմ սև օրերում / Անուշ անունըդ, որպես արշալույս...» (I, 175),

արեգակվել՝ «...Իմ խենթ սրտում կյանքի տենչն է *արեգակվում*...» (II, 195),

փարոսել՝ «...Քո ժպիտն է անժրպիտ ուղիներըս *փարոսում*...» (I, 145),

մթնշաղկել՝ «Անջատման պես տխուր խոսքեր, / Հոգուս լույսեր *մթնշաղկած*...» (I, 52):

Արեգակվել, մթնշաղկել, արցունքվել բառերում հանդես եկող **-վ-** ածանցը, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Աբրահամյանը, ոչ թե քերականական ձևույթ է, այլ հանդես է գալիս բառակազմական-բաղադրական դերով¹³:

Բառակազմական նորմայից ձևային շեղումները հիմնականում դրսևորվում են բառերի կրճատ ձևերի գործածությամբ և արմատների բառացումով, ինչպես օրինակ՝

**Երկինքը ցուրտ է-
Չարով հաստված...** (I, 8):

**... Աղոտ նայվածն իր մեր պես խորն է,
Իր նայվածն էլ է ճշում -«*շրնա՛լ*»...
... Կանայք *օրրում* են իրանց իրանը,
Կավալերները՝ *գեշի* կարոտ... (II, 105):**

**...Դու չարչարանաց ահավոր ժամին
Եկար *այցելու* իմ երկիրն անհույս... (II, 99):**

Բառերի վերոնշյալ կիրառություններն արդեն դիպվածային բառերի օրինակներ են: Բացի նշվածներից՝ Տերյանի չափածոյում տեղ են գտել նաև այլ բառերի մի շարք կրճատումներ, ինչպես օրինակ՝ **աշնային**՝ «...Եվ որպես վճիտ լճերն են ցուլում / Ցրտում *աշնային* - մշուշների տակ...» (II, 77), **աշնամուտ**՝ «...Որպես տերևն *աշնամուտի*՝ հողմի դեմ, / Դողում ես դու, որպես շյուղը եղեգի...» (I, 256), **աշնամերձ**՝ «...*Աշնամերձի* ահաբեկված մի թռչուն / Ծվարել է իմ հոգու պես որբ էլ նա...» (II, 106), **մայրմուտ**՝ «...*Մայրմուտն* էր ժլատ վառվում...» (I, 236), **չարխինդ**՝ «...Եվ *չարխինդ* ճնշե հողն իմ արյունոտ...» (I, 227), և բազմաթիվ այլ բառեր, որոնք Տերյանը ստեղծել է խոսքային միջավայրում նյութի անմիջական թելադրանքով: Ընդունված կարծիք է, որ լեզվում կատարվող կրճատումները, նույնիսկ հնչյունների կրճատումները, «տնտեսման ձգտումի արտահայտություն են»¹⁴: Ինչպես Լ. Եգեկյանն է նկատում, նմանօրինակ բառերի դերը ավելի քան ոճական

¹² Տես Լ. Եգեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 139:

¹³ Տես Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 656:

¹⁴ "Новые слова и словари новых слов", Л., 1978, с. 81.

է¹⁵, իսկ բանաստեղծական խոսքում, կարող ենք այստեղ ավելացնել, նաև մեծ չափով ռիթմային-տաղաչափական:

Տերյանի բանաստեղծական առաջին ժողովածուում տեղ են գտել քսանից ավելի նորակազմ բառեր, իսկ հետանրջյան բանաստեղծություններում հեղինակային նորակազմությունների թիվը հասնում է շուրջ երեք տասնյակի: Հայտնի է, թե ինչ ազդեցություն ունեցավ Տերյանի լեզվական արվեստը ժամանակի ու հետագայի բանաստեղծության վրա: Չարենցն իր բանաստեղծությունների առաջին ժողովածուի խորագրում գործածեց տերյանական **տխրադալուկ** բառը, որը տեղ գտավ նաև Սարմենի խոսքարվեստում: Այլ է Թ. Ղարաբյուրյանի տեսակետն այս բառի գործածության վերաբերյալ. «Այս բառը հայոց լեզվի բառապաշարում, այնուամենայնիվ, մնաց *մեկուսացած*»¹⁶ (ընդգծումը մերն է - Ս. Հ.):

Անհատական բնույթի նորաբանությունների ոճական գործածության գնահատման հիմնական չափանիշն այն է, թե դրանք ինչ դեր ու նշանակություն ունեն գեղարվեստական խոսքի դրական հատկությունների ապահովման գործում: Ինչպես արդեն նշվեց, Տերյանի խոսքարվեստում նորաբանությունները նպաստում են խոսքի սեղմությանը, բազմազանությանը, ինքնատիպությանն ու թարմությանը: Բացի նշված հատկանիշներից՝ նորաբանությունները նպաստում են նաև բանաստեղծական խոսքի հանգավորմանն ու բարեհնչությանը, ինչպես օրինակ՝

**Կանչում են ինձ ձայներ,
Ձայներ սրնգանուշ.
Պարզվում են ինձ ձեռներ,
Ձեռներ ձյունաքնքուշ... (II , 85):**

Նշված բանաստեղծական հատվածում հանգավորումը ստեղծվում է նորաբանությունների զուգակցումով, իսկ հնչյունական կրկնության եղանակները նպաստում են հնչյունական արտահայտչականության սաստկացմանը:

Տերյանը ոչ միայն ստեղծել է նոր բառեր, այլև իր չափածոյում հաճախ գործածել է այլ հեղինակների ստեղծած բառերը, հատկապես թուրքալեզու նորաբանությունները՝ իմաստային այլ նրբերանգներով: Որոշ ուսումնասիրողներ իրավացիորեն նկատում են, որ անհատական նորաբանությունները «յուրաքանչյուր անգամ ոչ թե վերարտադրվում են, այլ վերստին ստեղծվում»¹⁷: Ահա օրինակներ՝

- Այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուք... (I , 68):

Հմմտ.՝

**Այժըն էնտեղ տրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է ծըփում... (ՀԹ , I , 229)¹⁸ :**

Կամ՝

**Ոսկելուսիկ, օ՛, հրաթև, այնպես բոսոր
փայլում ես դու... (II , 37):**

¹⁵ Այս մասին տես **Լ. Եզեկյան**, նշվ. աշխ., էջ 142:

¹⁶ **Թ. Ղարաբյուրյան**, Դիվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում, «Լեզվի և ոճի հարցեր», № 7, 1983, էջ 201:

¹⁷ **Голуб И. Б.** Стилистика современного русского языка, М., 1986, с. 167.

¹⁸ **Հ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1958, էջ 229:

Հմնտ՝

Կարոտ է հոգիս, թռչում է հրաթև

Այս մենաստանի բարձր պարսպից... (ՀԹ, II, 26)¹⁹:

Հրաթև բառի թունանյանական գործածության մեջ ընդգծվում է բառի՝ «արագության» իմաստային առումը, իսկ տերյանական գործածության դեպքում՝ արդեն սիրած աղջկա «հրեղենության» գաղափարը: Տերյանական լեզվին այդքան համահունչ **տրտմաշուք** բառը Ռ. Իշխանյանը դասում է Տերյանի ստեղծած նորաբանությունների շարքին՝ նշելով, որ այն բնորոշ չէ նախատերյանական բանաստեղծությանը, նույնիսկ նախքան 1908 թվականը հրատարակված՝ Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի ստեղծագործություններին, մինչդեռ Ս. Մելքոնյանը այս բառի կապակցությամբ իրավացիորեն գրում է. «Վ. Տերյանը իր բանաստեղծություններից մեկում ինչպիսի հիացմունքով պիտի գործածած լիներ Թումանյանի՝ այնքան տերյանական շնչով օժտված *տրտմաշուքը*»²⁰ (ընդգծումը մերն է - Ս. Հ.):

Տերյանի ստեղծած նորաբանությունների հիմքում սովորական երևույթի բանաստեղծական ընկալումն է: Նույնիսկ լեզվում արդեն առկա բառերի նոր ու ինքնատիպ կիրառություններով Տերյանը կերտել է նոր բառիմաստներ, բառերի փոխաբերական գործածությունների շնորհիվ ոճական նոր արժեքով է օժտել դրանք: Ահա օրինակներ՝

...Քո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի նըման,

Որ տիրաբար արբեցնելով մահ է բերում... (I, 171):

Կամ՝

Դու գալիս ես մութ գիշերապահին

Եվ լինում ես լուռ... (I, 127):

Բառարաններում **տիրաբար** բառի «տիրոջը հատուկ», «իսկապես», «իշխանաբար» իմաստներին Տերյանը հավելում է մի նոր ու ինքնատիպ իմաստ՝ «հմայելով, գերելով, անառարկելի հմայքով», իսկ **գիշերապահ** բառի «գիշերը պահպանություն անող» իմաստին՝ «գիշեր, գիշեր ժամանակ» իմաստները:

Տերյանը իր ինքնատիպ խոսքարվեստով նպաստել է շատ բառերի իմաստների ընդլայնմանը: «Չարական, չարիքի, դժբախտության վրա ուրախացող» իմաստով հատկանշվող **չարխինդ** բառը Տերյանի չափածոյում գործածված է «չարագուշակ» իմաստով (I, 273), **անթի** բառը՝ «առանց նպատակի» (II, 9), **թունոտել** բառը՝ «հոգեկան տվայտանքների ենթարկել» (II, 21), **խնդալ** բառը՝ «շողալ, փայլել» իմաստներով (I, 49) և այլն:

Այսպիսով՝ հեղինակային նորակազմությունները ոչ միայն տերյանական խոսքը ոճավորող կարևորագույն միջոցներ են, այլև դրանց մեծ մասը նորաբանությունների արժեք ունի և հարստացնում է հայոց լեզվի բառապաշարը: Բարձր հաճախականություն ունեցող տերյանական նորակազմությունների մեծ մասը, նոր ու թարմ կապակցություններում հանդես գալով, արդեն ընդլայնում է իր գործածության ոլորտը՝ ավելի մեծացնելով հետա-

¹⁹ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1958, էջ 26:

²⁰ Ս. Մելքոնյան, Հ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Եր., 1986, էջ 248:

գայուն նորանոր դրսևորումներով կիրառվելու հնարավորությունները: Բառարաններում գրանցված յուրաքանչյուր բառ Տերյանի չափածոյում հանդես է գալիս նոր ու ինքնատիպ կողմերով, իմաստային նոր երանգով ու ներգործման նոր աստիճանով:

МЕРИ ОГАННИСЯН – *Неологизмы в словесном искусстве Ваана Терьяна.* – Статья посвящена исследованию неологизмов Ваана Терьяна, которые представляют собой примечательную особенность его поэзии. Придавая стихам поэта неповторимый колорит, они чрезвычайно важны для углубленного понимания его художественной манеры. Словообразовательные модели неологизмов В. Терьяна весьма самобытны. Самобытностью отмечены, в частности, его глагольные новообразования, а также необычное употребление некоторых суффиксов и усечение словообразовательных основ. Особое внимание обращено в статье на примеры неологизмов в области семантики, равно как и на непривычные значения, которые Терьян придавал неологизмам, созданным его предшественниками. Стилистическую значимость неологизмов для творчества поэта, а также их роль в его искусстве версификации невозможно переоценить.

MARY HOVHANNISYAN – *Neologisms in Vahan Teryan's Verbal Art.* – The article is devoted to the research of Vahan Teryan's neologisms, which represent a remarkable peculiarity in his poetry. Giving his poetry a unique colouring, they are quite important for profound understanding of his artistic manner. Word-forming models of V. Teryan's neologisms and particularly important for the formation of new verbs: the unusual use of some suffixes are also rather original. Special attention is paid to the examples of neologisms in the field of semantics, unusual meanings that Teryan gave to neologisms created by his predecessors. It is difficult to overestimate the stylistic significance of neologisms and their role in his art.